

ԿՆԻՔ
1885

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթողիկէ Էջմիածնի :

՝ Գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց Շամահոյ՝ սրբազան Մեսրոպը Արքեպիսկոպոսի ողջոյն եւ օրհնութիւն :

՝ Համաձայն յայտարարութեանդ 30 սեպտ. անցելոյ ամի հմ. 258 առաքելով առ գերապատուութիւնդ զԿոնդակ հաստատութեան հոգաբարձուաց վանական ուսումնարանին Սաղիանու եւ զԿոնդակ օրհնութեան յանուն եղբարց Բուդաղեանց , պատուիրևք քեզ հասուցանել զայնս նոցին արժանանձնութեանց :

Ողջ լեր ի Տէր

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Հմ. 36

ի 18 յունիս 1885) , . . . ԹՅԼԸ

ի Ս. Էջմիածին:

ԿՆԻՔ
1885

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի :

Հարգատ որւոյ մօրս լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի՝ վանահօր վանիցն Սաղիանու բարեկրօն Ստեփաննոս քահանայի , միաբանի նոյն վանից Սահակ քահանայի Յովնանեանց եւ յարգելեացն Մովսիսի Բուդաղեանց , Գրիգորի Աւլանեանց եւ Հայրապետի Մարզանեանց՝ հոգաբարձուաց Բուդա-